

Համլետ ԱՌԱՔԵԼՅԱՆ
Երևանի պետական համալսարան

**ՈՒ.Բ. ԵՅԹՍԻ «ՏԵՍԻԼՔԻ» ԷՃՈԹԵՐԻԿ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
«ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼՈՒՍԸ» ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

20-րդ դարի իռլանդացի դրամատուրգ, բանաստեղծ Ուիլյամ Բաթլեր Եյթսի ստեղծագործության վրա մեծ ազդեցություն են թողել իր և կնոջ «ինքնաբերական գրությունները», որոնք կատարվում էին հոգի-հաղորդողների ներգործությամբ: Դրանց շնորհիվ ծնվել է գրողի «Տեսիլք» էզոթերիկ աշխատությունը, որի տեսությունը նրա ուշ շրջանի բանաստեղծությունների խորհրդանիշների վերլուծության բանալին է: Այս հոդվածում քննարկվում են պոետի ստեղծագործության մեջ առանցքային դեր ունեցող «Երկրորդ գալուստը» բանաստեղծության գաղափարներն ու խորհրդանիշները, որոնց հիմքը «Տեսիլքի» էզոթերիկ տեսությունն է:

Բանալի բառեր. երկրորդ գալուստ, էզոթերիկ տեսություն, պատմության փիլիսոփայություն, գալարներ, Մեծ անիվ, հակադրական և առաջնային ժամանակաշրջաններ

Ուիլյամ Բաթլեր Եյթսը գալարների, Մեծ անիվի, լուսնի փուլերի, և ընդհանրապես, «Տեսիլքի» (1937) մեջ դրված ամբողջ տեսությամբ փորձում էր, ինչպես ինքն է նշում, պատմությանը և այն ամենին, ինչ կատարվում է աշխարհում, տալ «փիլիսոփայական» բացատրություն /Yeats, 1989: 190/: «Տեսիլքում» նկարագրվող տեսության հիմնական խորհրդանիշը, որը Եյթսին փոխանցել էին իր հոգի-հաղորդողները, ընթերցողին ներկայանում է մշակված տարբերակով. երկու փոխներթափանցող պտտվող կոներ կամ գալարներ, որոնք միահյուսված են, բայց միևնույն ժամանակ հակաբնույթ: Այս կոները խորհրդանշում են բոլոր հակադիր երևույթները, որոնք կազմում են իրականությունը՝ թե՛ մեկ անհատի, թե՛ պատմական շրջանի կտրվածքով: «Երկրորդ գալուստը» բանաստեղծության մեջ կոների հակաշրջման հետևանքով առաջացող առաջնային և հակադրական ժամանակաշրջանների տեղափոխության պոետական պատկերումն է: Այս ստեղծագործության խորհրդանշային համակարգի վերլուծության հիմքը նույնպես գրողի էզոթերիկ տեսություններն են:

Հաղորդողները աշխարհաստեղծման, հոգու դատաստանի, մարմնավորումների, Եվրոպայի պատմության մասին տեղեկությունները տալիս էին ամենատարբեր խորհրդանիշների՝ կոների, շրջանակների, և այլ պատկերների միջոցով, որոնց ապակողավորումը գրողը սկսել է 1920 թվականից հետո: Իրեն փոխանցված երկրաչափական սիմվոլիզմի ապակողավորմանն անդրադառնալիս Եյթսը որպես ներշնչման աղբյուր է մատնանշում Էմպեդոկլեսի Սիրո (Love, Concord)՝ միավորման ուժի, և

Պայքարի (Strife, Discord)՝ բաժանման ուժի շրջանակը /Yeats, 1989: 16/, որոնց հարաբերակցությամբ էր փիլիսոփան բացատրում աշխարհաստեղծումը: Եյթսի համակարգում մի կոնը խորհրդանշում է միասնությունը (Concord), մեկը, Աստծուն, օբյեկտիվը, հաստատունը, սերը, օրը, արևը, կյանքը, իսկ մյուսը (Discord)՝ անջատությունը, բազմաթիվը, մարդը, սուբյեկտիվը, փոփոխականը, ցանկությունը, գիշերը, լուսինը, մահը: Եյթսը համարում է, որ սուբյեկտիվն ու օբյեկտիվը հավերժ պայքարի մեջ են միմյանց դեմ. «Սուբյեկտիվը փորձում է առանձնացնել մարդուն մարդուց, օբյեկտիվը վերադարձնում է մեզ ընդհանուրին, որտեղից սկսել ենք» /Yeats, 1989: 53/: Աշխատության նախաբանում գրողն իր հաղորդողների հիմնական առաքելությունը համարում է այն հավաստումը, որ «մարդու բոլոր ձեռքբերումները ծնվում են իր իրական էության հակառակի հետ կոնֆլիկտից» /Yeats, 1989: 11/: Եյթսի պոետիկան հիմնված է հենց «հակասությունների տեսության» վրա, որի համար հիմք կարող է ծառայած լինել նաև Բլեյքի հայտնի «Առանց հակասության չկա առաջընթաց» /Blake, 2004: 181/ միտքը: Ռիչարդ Էլմանը, սակայն, իր «The Identity of Yeats» աշխատության մեջ Եյթսի գալարները չի համարում սովորական տիեզերական հակասությունների խորհրդանիշներ. «Մի գալարի ծայրը մյուսի հիմքն է» /Ellmann, 1964: 153/: Այս առումով Եյթսի համակարգը աղերսակցվում է Հեգելի այն դրույթի հետ, որ յուրաքանչյուր թեզ ենթադրում է հակաթեզ, կամ, այլ կերպ ասած, յուրաքանչյուր շարժում իր մեջ կրում է իր ավարտի հիմքը, որը պայմանավորված է հետ շարժման գոյությամբ: Այսպես գալարները դառնում են նիցցեյան հավերժական վերադարձի խորհրդանիշները՝ կազմելով Մեծ Անիվի երկու հակադիր բևեռները: «Այս անիվը յուրաքանչյուր ավարտուն շարժումն է մտքի կամ կյանքի», - գրում է Եյթսը /Yeats, 1989: 60/: Մեծ Անիվը բաժանվում է 28 փուլերի՝ լուսնային ամսվա օրերի քանակով, որոնցով անցնում են երևույթները՝ վերջում վերադառնալով առաջին փուլին և այդպիսով վերսկսելով շրջապտույտը: Մեծ Անիվի առաջին փուլը անլուսին գիշերն է, որից սկսվում է ամեն ինչ, իսկ լիալուսինը տասնհինգերորդն է: Այս փուլերում մարդկային փոխակերպում չի կատարվում, քանի որ մարդու կյանքն առանց երկու գալար-կոնների պայքարի գոյություն ունենալ չի կարող, իսկ սրանք բացարձակ օբյեկտիվի և բացարձակ սուբյեկտիվի տիրույթներն են: «Մարդը ձգտում է իր հակառակին կամ իր դրության հակառակին, տասնհինգերորդ փուլում ձեռք է բերում օբյեկտը, եթե դրան հնարավոր է հասնել, և նորից վերադառնում է առաջին փուլին», - գրում է Եյթսը /Yeats, 1989: 60/:

Ըստ աշխարհակերտման Եյթսյան մոդելի՝ յուրաքանչյուր երկու հազարամյակը մեկ գալաների հակաշրջման պատճառով աշխարհում ահռելի հեղաշրջումներ են լինում: Գրողը «Տեսիլքի» նախաբանն ավարտում է Էզրա Փաունդին ուղղված նամակով, որի վերջում առաջարկում է այն տեսլականը, որ յուրաքանչյուր երկու հազար տարին մեկ «աշ-

խարհում ինչ-որ բան է կատարվում, որ դարձնի մեկին սուրբ, մյուսին՝ աշխարհիկ, մեկին՝ իմաստուն, մյուսին՝ հիմար, մեկին՝ վայելույզ, մյուսին՝ գարշելի, մեկին՝ աստվածային, մյուսին՝ սատանայական» /Yeats, 1989: 21-22/: Հնարավոր է երկրաչափորեն չափել աշխարհի ներդաշնակությունը, նժարների շարժումը, և կանխագուշակել «այդ երևույթի» գալու ժամանակը: Սա կապված է Մեծ անիվի ընթացքի հետ, որի մեկ ամբողջական շրջապտույտի տևողությունը հաշվարկվում է չորս հազար տարի, հետևաբար առաջնային (primary) և հակադրական (antithetical) գալարներից յուրաքանչյուրի շարժմանը բաժին է հասնում երկու հազարը, որից հետո առաջնային է դառնում հակադրականը:

Քրիստոնեական շրջանը Եյթսը համարում է առաջնային շրջան. «Մինչև Քրիստոսի ծնունդը կրոնն ու կյանքը բազմաստվածային էին՝ հակադրական: Քրիստոսի ծնունդից հետո կրոնական կյանքը դառնում է առաջնային, իսկ աշխարհիկ կյանքը՝ հակադրական – մարդը տալիս է կայսրին իրերը, որոնք կայսրին են» /Yeats, 1989: 192/: Վերջին տողում Եյթսն ուղիղ հղում է կատարում Մատթեոսի ավետարանի այն հատվածին, որում Քրիստոսը փարիսեցիներին ասում է. «Գնացե՛ք, տվեք կայսրին՝ կայսեր, և Աստծուն՝ Աստծուն»: Գրողն ակնարկում է երևույթների պատկանելության և գոյության կանխամտածվածությունը՝ այս դեպքում մասնավորեցնելով ժամանակների կանխորոշված լինելը: «Տեսիլքի» երկրորդ գրքում լուսնի փուլերի մասին (որոնք համընկնում են առաջնային և հակադրական գալարների հետ) խոսելիս Եյթսը, մատնանշելով Հեգելին, գրում է. «Նա տեսնում է քաղաքակրթության ամբողջ գործընթացը որպես փախուստ Բնությունից, որը մասամբ հաջողվել է Հունաստանին, և ամբողջապես՝ Քրիստոնեությանը» /Yeats, 1989: 149/: Հակադրելով բնությունն Աստծուն՝ նա շարունակում է. «Երբ Անիվի իմ առաջին մեծ դիագրամը նկարվեց ինձ համար, առաջին փուլից մինչև տասնհինգերորդ փուլի միջակայքում գրված էր «Բնություն», իսկ տասնհինգերորդից մինչև առաջինի միջակայքում «Աստված» էր գրված» /Yeats, 1989: 149/: Բնությունը, աշխարհիկը, «կայսրինը» ապրել է իր ժամանակը մինչև քրիստոնեություն, և մարդն արդեն «կայսրինը տվել է կայսերը»: Եկել է Աստծո՝ առաջնային ժամանակը. «Սերը սկսեց գերակայել աններդաշնակությանը, ցերեկը՝ գիշերվան» /Yeats, 1989: 182/: Գրողն ակնարկում է երևույթների պատկանելության և գոյության կանխամտածվածությունը՝ այս դեպքում մասնավորեցնելով ժամանակների կանխորոշված լինելը:

Եյթսը հակադրական ժամանակները (հակադրական գալարի տիրապետման ժամանակները) համարում էր էքսպրեսիվ, հիերարխիկ, բազմակի և կոպիտ, մինչդեռ առաջնային ժամանակները՝ դոգմատիկ, աստիճանավորված, միավորող, մարդկային, և որ ամենակարևորն է՝ խաղաղ: Գրողի տեսության համաձայն՝ քրիստոնեական շրջանն ավարտվում է առաջնային գալարի շրջապտույտով, և դրան նորից հետևելու է հակադրական շրջանը:

*Պարզվելով ու պարզվելով ընդլայնվող գալարում՝
 Բազեն չի լսում բազեպանին:
 Իրերը փշրվում են, կենտրոնը չի պահում
 Լոկ քառս է արձակված աշխարհում,
 Արյամբ մթազնած հոսանքն է արձակված, և ամենուր
 Անմեղության ծեսն է խորտակված:
 Լավագույներին ամեն համոզմունք է պակասում, իսկ
 վարագույները
 Լի են կրքոտ սաստկությամբ: /Yeats, 2000: 124/*

Քրիստոսի ծնունդով սկսված ժամանակաշրջանի գալարի պտույտի մեջ Եյթսը վերհանում է բազեի խորհրդանիշը: Դենիս Դոնոհյուն իր «Yeats» (1971) աշխատության մեջ գրում է. «Շատ ընթերցողներ ցանկանում են թարգմանել բազեապանությունը հատուկ քաղաքական ենթատեքստով, բայց ես կարծում եմ, որ այն ավելի չարագույժ ազդեցություն ունի, քան մասնավոր՝ մատնանշելով կառավարման կորստի և պաշտոնական կարգի անկման առաջին նշանները» /Donoghue, 1971/: Քաղաքական ենթատեքստն այստեղ կարող էր վերաբերել միայն Իռլանդիա-բազեի ազատագրմանը Բրիտանիա-բազեպանից, սակայն Եյթսն ավելի լայն առումով այս խորհրդանիշով շեշտում է բազեպանի կառավարման կորուստը, որը գալարի շարժման հետևանքով հայտնվել է ներքևում, իսկ բազեն բարձրացել է վերև, ինչի արդյունքում էլ այլևս չի լսում: «Էականորեն բազեի կապի կորուստը ակնարկում է մարդու առանձնացումը իր բոլոր իդեալներից, որոնք թույլ են տվել իրեն կառավարել սեփական կյանքը՝ լինելին դրանք կրոնից, փիլիսոփայությունից, թե պոեզիայից» /Ellmann, 1964: 259/: Բանաստեղծության երրորդ տողում ամեն ինչ բացատրվում է. կենտրոնն այլևս չի կարողանում պահել և իրերը փշրվում են, քանի որ նոր՝ հակադրական ժամանակները գալարի շարժման հետևանքով դառնում են առաջնային.

*Վստահապես ինչ-որ հայտնություն է մոտ
 Վստահապես մոտ է Երկրորդ Գալուստը:
 Երկրորդ Գալուստը: Հագիվ դուրս եկան այդ բառերը
 Երբ Spiritus Mundi-ից մի մեծ պարկեր
 Անհանգստացրեց հայացքս. անապատի ավազների մեջ մի տեղ
 Մի կերպարանք՝ մարմնով առյուծի և մարդու գլխով
 Հայացքով՝ դապարկ և անգութ, ինչպես արևը
 Շարժում է իր դանդաղ ազդրերը, երբ նրա շուրջբոլորը
 Անապատի վրդովված թռչունների սրվերներն են երերում: /Yeats,
 2000: 124/*

Սկզբնական սևագիր տարբերակում Եյթսն այս բանաստեղծությունը վերնագրել էր «Երկրորդ ծնունդ» /Bloom, 2009: XV/, բայց վերջնական տարբերակում գաղափարը կապվում է Քրիստոսի երկրորդ գալստյան հետ՝ բանաստեղծության վերջին տողում վերահաստատելով քրիստոնեական աղերսը Բեթղեհեմի պատկերով: Բայց եթե դա «երկրորդ գալստյան» նկարագրություն է, ապա այն սուրբ Հովհաննեսի «Հայտնության» երկրորդ գալուստը չէ, եթե հաշվի չառնենք երկու նկարագրությունների գալուստներին նախորդող աշխարհակործանման ընդհանուր տրամադրությունները: Նորման Ջեֆարեսն այս առումով գրում է. «Բազեն մարդու խորհրդանիշն է՝ ներկա քաղաքակրթության, որը հեռացել է Քրիստոսից, ում ծնունդը հայտնությունն էր, որը Քրիստոնեության սկիզբն էր» /Jeffares, 1968: 203/: Ինչպես բազեն այլևս չի լսում բազեպանին, ժամանակակից քաղաքակրթությունն էլ չի լսում Քրիստոսին:

Քրիստոնեությունը արևմտյան քաղաքակրթության հիմքն է. այս դրույթից ելնելով՝ Եյթսը առաջնային ժամանակները վերագրում է հենց Արևմուտքին՝ ակնարկելով, որ հակադրական ժամանակների «Քրիստոսը» ծնվելու է Արևելքում. «Երբ մեր պատմական ժամանակը հասնի առաջին փուլին, կամ նոր ժամանակների սկզբին, հակադրական Արևելքը կծնի Արևմուտքից, և ծնված երեխան, կամ ժամանակը կլինի հակադրական» /Yeats, 1989: 187-188/: Ի դեպ, Արևելք ասելով՝ Եյթսը նկատի ունի ոչ թե Հնդկաստանն ու Չինաստանը, այլ այն Արևելքը, որն ազդել է եվրոպական քաղաքակրթության վրա՝ Միջին Ասիան, Միջագետքը և Եգիպտոսը: Գուցե դրա համար էլ «Երկրորդ Գալուստում» նոր ժամանակների «երեխայի»՝ հրեշի խորհրդանիշը նմանեցված է սֆինքսի:

Համոզված լինելով, որ մոտենում է Երկրորդ Գալուստը՝ Եյթսը Spiritus Mundi-ից («երկրի ոգի») մի մեծ պատկեր է տեսնում: Եյթսն իր գրություններում Spiritus Mundi-ն սահմանում է որպես «պատկերների ընդհանուր պահեստատուն, որը դադարել է որևէ մեկ անհատի կամ հոգու սեփականություն լինել» /Ross, 2009: 220/: Ոգին կարծես գրողին հուշում է ահագնացող տեսարանը. անապատից երևում է հրեշի պատկերը՝ հակադրվելով բազեին: Չնայած Ոգու ներշնչած պատկերն արդեն կա, հրեշը դեռ ֆիզիկական աշխարհում չի ծնվել:

Ցիկլային մութ տեսիլքները նորից շաղկապվում են բիբլիական գալստյան հետ, բայց եթե մարդու Որդին «գալիս է երկնքի ամպերի վրայով՝ զորությամբ և բազում փառքով» (Մտ 24: 30), ապա Եյթսի հրեշը՝ դատարկ և անգույն հայացքով, որը խորհրդանշում է նրա այլ ոլորտներից լինելը, կուզը դուրս գցած է սողոսկում դեպի իր ծնունդ.

*Նորից մութն է ընկնում, բայց հիմա ես գիտեմ,
Որ քսան դարերի քարացած քունը
Խանգարվեց մղձավանջով ճոճվող օրորոցի
Եվ ի՞նչ կոպիտ գազան է, որի ժամն է եկել վերջապես,
Կուզեկուզ քայլում դեպի Բեթղեհեմ, որ ծնվի: /Yeats, 2000: 124/*

Քսան դարերը նշելով՝ Եյթսը հիշեցնում է մեկ գալարի շրջապտույտի ժամանակը՝ երկու հազար տարին, որն այս դեպքում սկսվել էր Քրիստոսի ծնունդով: Քարացած քնի մեջ հակադրական գալարն էր, և դրա հետ կապված ամեն ինչ: Առաջնային-քրիստոնեական շրջանում «քնած» անցյալը սպասում է իր վերածննդին:

Վերջում Եյթսը գազանի որպիսությունը, անգամ նրան նկարագրելուց հետո, դնում է հարցական նշանի տակ: «Տեսիլքում» մեկնաբանությունը տրվում է այսպես. «Ես արդեն ասել եմ այն, ինչ կարող էր ասվել: Մանրամասները Տասներեքերորդ Կոնի գործն են, կամ ցիկլի, որը կա յուրաքանչյուր մարդու մեջ, և ամեն մեկի կողմից անվանվում է իր ազատությունը: Անկասկած, քանի որ այն կարող է անել ամեն ինչ և գիտի ամեն ինչ, գիտի՝ ինչ է անելու սեփական ազատության հետ, բայց պահում է գաղտնիքը» /Yeats, 1989: 219-220/: Տասներեքերորդ Կոնը Եյթսի համակարգում աբսոլյուտի, անանձնական աստվածայինի, Աստծո խորհրդանիշն է: Ռիչարդ Էլմանը նշում է, որ Եյթսը, Աստծուն նման մեխանիկական անուն տալով, տեղ չի թողնում մարդակերպ Աստծո՝ հատկապես քրիստոնեական Աստծո քննարկման համար /Ellmann, 1964: 159/: Աստված նրա մոտ «այն» է՝ առարկայական:

Ներկա առաջնային շրջանին հաջորդող հակադրական շրջանն ուրվագծելուց բացի, Եյթսը նաև անդրադարձել է նախորդ հակադրական շրջանին, որը Քրիստոսի ծննդից առաջ է եղել: «Տեսիլքի» վերջին գիրքը սկսելով 1923 թվականին գրված «Լեդան և կարապը» բանաստեղծությամբ՝ գրողը ցույց է տալիս, որ Քրիստոսի ծնունդով ավարտվել է նախորդ հակադրական շրջանը, որը, ըստ Եյթսի, սկսվել էր Լեդայի բռնաբարությամբ: Ջորջիո Մելքիորին Եյթսին նվիրված իր 1970 թվականի աշխատության մեջ նշում է, որ պոետը Հեղինեի ծնունդը (Լեդայի բռնաբարությունը), Քրիստոսի ծնունդը և այն, ինչը դեռ պիտի լինի («Երկրորդ գալուստը»), համարում է աշխարհի պատմության երեք գլխավոր ճգնաժամերը, որոնցից յուրաքանչյուրը փոխել է առկա կարգը և բերել նոր քաղաքակրթության շրջան /Melchiori, 1960/:

Այսպես Եյթսը Լեդայի հղիությունը համեմատում է սուրբ Մարիամի հղիության հետ՝ երկուսն էլ համարելով պատմական նոր շրջանի սկիզբ: Իզուր չէ, որ Լեդայի և Ջևսի լեգենդի մասին «Տեսիլքում» խոսելիս Եյթսն օգտագործում է «ավետում» (annunciation) բառը, որն աղերսվում է Գաբրիել հրեշտակի ավետման հետ: Հունական քաղաքակրթության սկիզբը մերժել էր նախորդ (տրամաբանորեն՝ նորից առաջնային) քաղաքակրթությունը՝ դառնալով դրա «հակաթեզը»: Եյթսը համարում է, որ նոր քաղաքակրթության սկզբի ավետումը եկել է Լեդային: Այդ ավետումը պատկերացնելիս նա «միայն անկյունում թաքնված մի թռչուն և մի կին» է տեսնում /Yeats, 1989: 195/: Թռչունը՝ կարապի փոխակերպված Ջևսն է, իսկ կինը՝ Լեդան, և նրանց կենսակցման հետևանքով սկսվում է նոր՝ հակադրական շրջանը.

*Յնցումը՝ երանքի մեջ ծնում էր այնպեղ
Պապը՝ կոպրված, այրվող փանիքն ու աշտարակը
Եվ Ագամենոնին՝ մահացած: /Yeats, 2000: 149/*

Այսպիսով, իր «Երկրորդ գալուստը» բանաստեղծությամբ Ու. Բ. Եյթսը ևս մեկ անգամ շեշտադրում է աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների էզոթերիկ հիմքը, որը, ըստ նրա համակարգի, կապված է գալարների շարժման հետ: Գրողն ուրվագծում է նոր՝ հակադրական ժամանակի «երեխայի» մոտավոր պատկերը, բայց հարցական նշանի տակ՝ մանրամասները թողնելով արսույուտին: Իսկ թե երբ է լինելու այս հայտնությունը, կամ Եյթսյան «երկրորդ գալուստը», նշվում է Լեդի Գրեգորիի օրագրում 1925 թվականի նոյեմբերին կատարված գրառման մեջ, ըստ որի՝ Եյթսի կանխատեսմամբ այն լինելու է «ոչ առաջիկա երկու հարյուր տարում» /Ross, 2009: 222/:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Blake W. The Complete Poems: “The Marriage of Heaven and Hell”. England: Clays Ltd., 2004.
2. Bloom H., Hobby B. Rebirth and Renewal: Bloom's Literary Themes. New York: Blooms Literary Criticism, 2009.
3. Donoghue D. William Butler Yeats. Modern Masters. New York: Viking Press, 1971. // URL: <https://goo.gl/XCDfqT>
4. Ellmann R. The Identity of Yeats. New York: OUP, 1964.
5. Jeffares A.N. A Commentary On the Collected Poems of W.B. Yeats. Stanford: Stanford University Press, 1968.
6. Melchiori G. The Whole Mystery of Art, Pattern into Poetry in the Work of W.B. Yeats. London: Routledge & Kegan Paul, 1960.
7. Ross D.A. Critical Companion to William Butler Yeats: A Literary Reference to His Life and Work. New York: Facts On File Library of World Literature, 2009.
8. Yeats W.B. A Vision: The Revised 1937 Edition. The Collected Works of W.B. Yeats; Volume XIV. New York: Macmillan, 1989.
9. Yeats W.B. Selected Poems. London: Penguin Classics, 2000.

Г. АРАКЕЛЯН – Эзотерическая теория «Видения» У.Б. Йейтса в стихотворении «Второе пришествие». – На творчество ирландского драматурга и поэта XX века У.Б. Йейтса в значительной степени повлияли автоматические писания автора и его жены, которые были вдохновенными душами-коммуникаторами. Благодаря этим писаниям была создана эзотерическая работа под названием «Видение». Теория этой книги служит ключом к анализу символики в поздней поэзии Йейтса. В данной статье рассматриваются идеи, основанные на метафизической теории «Видения» и символизм одного из самых значимых стихов поэта под названием «Второе пришествие».

Ключевые слова: Второе пришествие, эзотерическая теория, философия истории, спирали, Большое колесо, антитетичные и первичные периоды

Н. АРАКЕЛЯН – The Esoteric Theory of W. B. Yeats’s “A Vision” in the Poem “The Second Coming”. – The works of the 20th century Irish dramatist and poet W. B. Yeats were greatly influenced by his wife’s and his own automatic writings inspired by soul-communicators. It was thanks to those writings that the esoteric work entitled “A Vision” was created. Its theory serves as a key to the analysis of symbolism in Yeats’s later works. The paper examines the symbols and the main ideas of one of the most significant poems in Yeats’s works entitled “The Second Coming”. The latter is based on the metaphysical theory of “A Vision”.

Key words: “The Second Coming”, esoteric theory, the philosophy of history, gyres, the Big Wheel, antithetical and primary periods of time